ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2012 թվականի N 36-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, աշխատակազմի բաժիններում աշխատանքների արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով, Աբովյանի քաղաքային համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 07-ի «Աբովյանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2012 թվականի համար հաստատելու մասին» N 81-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Համայնքային ծառայողներ» մասի 6-րդ տողի «Հաստիքի քանակը» սյունակի «7» թիվը փոխարինել «8» թվով, «Ընդամենը» սյունակի «798000» թիվը փոխարինել «912000» թվով.

2) «Համայնքային ծառայողներ» մասի 8-րդ տողի «Հաստիքի քանակը» սյունակի «9» թիվը փոխարինել «8» թվով, «Ընդամենը» սյունակի «864000» թիվը փոխարինել «768000» թվով.

3) «Ընդամենը» տողի «Ընդամենը» սյունակի «8239500» թիվը փոխարինել «8257500» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 7-ի N 35-Ա որոշմամբ առաջարկված պաշտոնները Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից հանելու և նոր պաշտոն ավելացնելու նպատակով անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -10

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՐՅԱՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՌ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ
ԹԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻՄԱԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ Կ. Գուլոյան

2012թ. օգոստոսի 07
ք. Աբովյան